անարժան գտաւ շնորհաց, կամ Տաճարականացն՝ որոց անկ էր փոխանակ ընդ քեզ կռուելոյ՝ սրբութեան կրօնից իւրեանց կալ պատկառ։ Արդ վասն այսոցիկ ամենայնի խրատ տամ Բարձրութեանդ եւ խանդակաթ սիրոյ գրկօք փարելով՝ յորդորեմ ’ի Տէր, յօժարութեամբ եւ բարեպաշտութեամբ ընդունել զոր ասացաքս[178], եւ դադարել ’ի մարտէ, թէպէտ եւ անհաւան գտցի կոմսն յանձնել զբերդն, մինչեւ աւարտեսցի դատն, առ որ՝ տացէ Տէր գտանել այր կարող իրաւադատ. որում եւ յանձն առնեմք՝ զհակառակող բանիցս այսոցիկ զկողմն՝ ընդ եկեղեցական կապանօք արկանել, եւ նեղել ’ի ձեռն բնկաց երկրին եւ եկաց»։[179]– Խնդրեալն իրաւարար գտաւ այն՝ որ վեց ամօք յառաջ առաքեալ էր ’ի նոյն գործ. եպիսկոպոսն Կրեմոնայ Սիկարտ, առ որ՝ եւ այժմ զնոյն երկրորդէր Քահանայապետն՝ կոնդակաւն ’ի 20 օգոստոսի 1210 ամին[180], յետ ընդունելոյ զդեսպանս Լեւոնի, զՀեթում-Հեղի՝ երբեմն տէր Լամբրունի եւ այժմ առաջնորդ Դրազարկու, զ*Արշիվալտ* զօրական, եւ զ*Բաւոն* (Bavon) լատին լեզուի քարտուղար թագաւորին[181], յորոց ձեռս աղերսէր Լեւոն՝ փութով դատ առնել իրաւանց թոռինն, զի ազատեալ ’ի հոգոց անտի՝ դարձուսցէ զզէնս իւր ’ի վերայ այլադենից թշնամեաց քրիստոնէից։– Այսոցիկ իրազեկ առնէր Պապն զպատգամաւոր իւր. պատուիրելով նմա երթալ եւ առնուլ ընդ իւր երկուս եւս ընկերս խոհականս անկողմնատարս, ընտրեալս յերկոցուն վիճողացն, եւ վճռել յոր երեքին կամ երկուքն միաբանիցին. իսկ եթէ չհաւանիցին վիճողքն՝ կոչել զպատրիարքունս Երուսաղեմի եւ Անտիոքայ, եւ նոքօք աւարտել զքննութիւնն եւ զվճիռ՝ անդարձօրէն եւ ընդ բանադրանօք. որում եթէ ըմբոստացեալ միոյն ստունգանեսցէ՝ ընկճել զայնպիսին բուռն զօրութեամբ բնկաց երկրին եւ օտարաց. իսկ եթէ դէպք ինչ անակնկալք արգել լիցին նմա կատարման գործոյս՝ յանձն արասցէ պատրիարքացն երկոցուն[182]։– Յիշելով Քահանայապետին եւ զխէթ Հայոց վասն բռնի բանադրանաց, ’ի նմին

---

178 Monemus ergo Celsitudinem tuam, quam sincere dilectionis brachiis amplexamur, et exortamur in Domino, etc.

179 Si quam vero partium tam necessario et sano consilio noluerit acquiescere, per censuram ecclesiasticam, et tam per indigenos quam etiam peregrinos eam præcipimus eserceri.

180 Թուղթք Ինոովկ. ԺԳ. ՃԻԳ։

181 Որք երթալոց էին եւ ’ի Գերմանիա, առ Ոթոն կայսր։

182 Թուղթք Ինոովկ. ԺԴ. ԼԳ։